ՀԱՐԹԱԿ
Հետազոտական Կենտրոն

# «Պատգամավորների ծախսերի ավելացման 15.07.2021թ. օրենսդրական փոփոխության վերաբերյալ մոնիտորինգ»

# ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Պատգամավորների ծախսերի ավելացման
15.07.2021թ. օրենսդրական փոփոխության
վերաբերյալ

© «Հարթակ» հետազոտական կենտրոն հասարակական կազմակերպություն

**Գյումրի 2022**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**1. Նախաբան** ..... 3
**2. Օրենքի նախագիծ.**
**հիմնավորում և քվեարկություն**..... 5
**3. Մոնիտորինգի արդյունքները** ..... 7
**4. Հատուկ կարծիք** ..... 13
Լևոն Բարսեղյան. ..... 13
Նաիրա Զոհրաբյան ..... 16
Արթուր Սաքունց..... 17
**5. Եզրակացություն** ..... 19
Հավելված 1 ..... 21
Հավելված 2 ..... 22
Հավելված 3 ..... 23

# 1. ՆԱԽԱԲԱՆ

2021թ. հուլիսի 15-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստում փոփոխություն կատարվեց «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում, որի համաձայն պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերի փոխհատուցման դիմաց սահմանված 50.000 ՀՀ դրամը հնգապատկվեց՝ դառնալով 250.000 ՀՀ դրամ յուրաքանչյուր պատգամավորի համար: Օրենքը չի պահանջում պատգամավորից ներկայացնել որևէ ապացույց պատգամավորական գործունեությամբ պայմանավորված ծախսերի վերաբերյալ: Ստացվում է, որ պատգամավորներն, անկախ իրականացրած գործունեությունից, ցուցաբերած ակտիվությունից և կատարած ծախսերից, հավասարաչափ կարող են ստանալ ամսական 250.000-ական ՀՀ դրամ փոխհատուցում: Օրենքի փոփոխությունն ուժի մեջ է մտել 8-րդ գումարման Ազգային ժողովի երկրորդ նստաշրջանից՝ 2021թ.-ի սեպտեմբերի 13-ից:

Օրենքի այս փոփոխությունը հասարակության մեջ առաջ բերեց մի շարք հարցեր և կասկածներ: Օրենքում փոփոխութուններ կատարելու վերաբերյալ նախագծի հաստատումից օրեր անց մի խումբ կազմակերպություններ և քաղաքացիներ ուղերձով դիմեցին Ազգային ժողովին՝ արտահայտելով իրենց մտահոգությունը և ներկայացնելով օրենքի լրամշակման առաջարկություններ[1]: Ուղերձը մնաց անհետևանք:

«Պատգամավորների ծախսերի ավելացման 15.07.2021թ. օրենսդրական փոփոխության վերաբերյալ մոնիտորինգ» ծրագրի շրջանակներում «Հարթակ» հետազոտական կենտրոն հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ «Հարթակ» ՀԿ) հարցումներ է ուղարկել ՀՀ 8-րդ գումարման Ազգային ժողովի բոլոր պատգամավորներին և ՀՀ Ազգային ժողովի Ֆինանսական կառավարման և հաշվառման վարչությանը: Մոնիտորինգի նպատակն է.

[1] «Ուղերձ ՀՀ Ազգային ժողովին՝ պատգամավորների ծախսերի ավելացման օրենսդրական փոփոխության մասին», 19 հուլիսի, 2021 թ. հասանելի է՝ https://rb.gy/obinav

*սահմանել հանրային վերահսկողություն և բարձրացնել Ազգային ժողովի պատգամավորների հաշվետվողականությունը «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում ՀՀ Ազգային ժողովի 2021թ. հուլիսի 15-ի արտահերթ նիստում ընդունված փոփոխության մասով:*

Մոնիտորինգը ներառում է 2021թ-ի սեպտեմբերի 13-ից 2022 թվականի փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածը: Հարցումների արդյունքում պատգամավորների ստացած փոխհատուցումներին առնչվող տվյալները ենթարկվել են վերլուծության և ներկայացվել ինֆոգրաֆների տեսքով:

# 2. ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ. ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հուլիսի 15-ի արտահերթ նստաշրջան է բերվել «Իմ քայլը» խմբակցության պատգամավորներ Վիկտոր Ենգիբարյանի և Նիկոլայ Բաղդասարյանի կողմից:

**Օրենքի նախագծի հիմնավորման մեջ նշվում է հետևյալը**.

> *«... նշված կարգավորումն[2] օրենքի ընդունման օրվանից հետո չի վերանայվել, մինչդեռ անցած ժամանակահատվածում տեղի է ունեցել համապատասխան ծախսերի էական ավելացում: Բացի այդ, 2015 թվականի Սահմանադրության փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունն անցում է կատարել խորհրդարանական կառավարման համակարգի՝ Ազգային ժողովի, ինչպես նաև պատգամավորների լիազորությունների և գործառույթների շրջանակի ընդլայնմամբ»:*

Հիմնավորման մեջ նախագծի հեղինակները նաև ներկայացրել են թվային տվյալներ՝ ցույց տալով, որ նշված փոփոխությունը չի ավելացնում պետության ծախսերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաջորդ՝ 8-րդ գումարման Ազգային ժողովում պատգամավորների թիվը 25-ով պակաս է լինելու 7-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվից: Ներկայացնում ենք հիմնավորման այդ հատվածն ամբողջությամբ.

[2] Ի նկատի ունի «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի 11-րդ հոդվածը, որը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերը յուրաքանչյուր պատգամավորի համար սահմանել ամսական 50000 դրամի չափով, որոնց բաշխման կարգը սահմանվում է օրենքով»:

> *«Նշված փոփոխությունն առաջարկվում է ուժի մեջ մտցնել Ազգային ժողովի հաջորդ գումարման երկրորդ նստաշրջանի բացման օրվանից, հաշվի առնելով, որ 8-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թիվը 107 է, որը 25-ով պակաս է 7-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվից (132) և տարեկան հաշվարկով պետության ծախսերը ոչ թե ավելանում են, այլ՝ պակասում են մոտ 17,7 մլն դրամով (8-րդ գումարման Ազգային ժողովի 25 պատգամավորի և նրանց օգնականների տարեկան վարձատրության ընդհանուր գումարը ներկայումս կազմում է մոտ 274,5 մլն դրամ, իսկ նախագծով առաջարկվող կարգավորմամբ 8-րդ գումարման Ազգային ժողովի 107 պատ-գամավորի տարեկան վճարվող գումարը կկազմի 256,8 մլն դրամ)»*[3]:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության և ստացել դրական եզրակացություն: Քվերակության է դրվել 2021 թվականի հուլիսի 15-ի արտահերթ նիստի ժամանակ, ընդունվել առաջին ընթերցմամբ 70 կողմ, 1 դեմ[4], 0 ձեռնպահ ձայնով, ապա ընդունվել երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 71 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայնով:

---

[3] ««Պետական պաշտոններ եվ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման հիմնավորում, հասանելի է՝ http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&draftid=12643&reading=0

[4] Նախագծին դեմ է քվեարկել այդ պահին դալիճում գտնվող միակ ընդդիմադիր պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը:

# 3. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Պատգամավորների ծախսերի ավելացման 15.07.2021թ. օրենսդրական փոփոխության վերաբերյալ մոնիտորինգ»-ի շրջանակներում հարցումներ են ուղարկվել 8-րդ գումարման Ազգային ժողովի բոլոր պատգամավորներին: «Հարթակ» ՀԿ-ն գրավոր տարբերակով պատասխան է ստացել 14 պատգամավորից: Հարցումն ուղարկելուց հետո երկու անգամ գրավոր հիշեցում է ուղարկվել պատգամավորներին, ապա կապ է հաստատվել գրեթե բոլոր պատգամավորների օգնականների հետ[5]՝ ևս մեկ անգամ հիշեցնելով հարցման մասին:

Հարցմանը պատասխանած պատգամավորների թիվ

13%

| | |
|---|---|
| 100% | 13% |
| 107 | 14 |

Հարցումների արդյունքները վերլուծվել են համաձայն հետևյալ չափորոշիչների.

1. հարցման և պատգամավորի պատասխանի բովանդակության համապատասխանություն,
2. հարցմանը պատասխանած պատգամավորներն ըստ խմբակցությունների,
3. հարցման պատասխանում փոխհատուցում ստանալու վերաբերյալ նշման առկայություն:

[5] Հեռախոսազանգերի ընթացքը համընկել է ընդդիմության «Դիմադրություն» շարժման հետ, ինչի հետևանքով ընդդիմության պատգամավորների գրեթե մեծամասնության գրասենյակները չեն պատասխանել հեռախոսազանգերին:

## 1. Հարցման և պատգամավորի պատասխանի բովանդակության համապատասխանություն:

Հարցման նպատակն էր պարզել՝ արդյո՞ք պատագամավորներն օգտվել են օրենքով սահմանված պատգամավորների փոխհատուցման վճարից, պատգամավորական գործունեության շրջանակներում ի՞նչ բնույթի ծախսեր են կատարել, պատգամավորական ծախսերի և դրանց հետ փոխկապակցված փոխհատուցումների վերաբերյալ արդյո՞ք ներկայացրել են ծախսային որևէ փատաթուղթ և/կամ հաշվետվություն[6]:

Ըստ «Հարթակ» ՀԿ-ի մշակած չափորոշիչների, պատգամավորի պատասխանը համարվել է հարցմանը համապատասխան, եթե վերջինս իր պատասխանում անդրադարձել է վերոհիշյալ հարցերից նվազագույնը մեկին: Ըստ այդմ, հարցմանը պատասխանած պատգամավորների 57%-ի պատասխանը դիտարկվել է որպես բովանդակային:

**Հարցման եվ պատգամավորի պատասխանի բովանդակության համապատասխանություն**




Ըստ պատգամավորների պատասխանների, պատգամավորական ծախսերի համար կատարված փոխհատուցման գու-

[6] Օրենքը չի սահմանում պատգամավորական ծախսերի դիմաց ծախսային ապացույց համարվող փաստաթուղթ և/կամ հաշվետվություն ներկայացնելու պահանջ: Պատգամավորներին ուղղված հարցման մեջ այս կետերի ներառման նպատակն էր պարզել հաշվետու և թափանցիկ գործելաոճի շուրջ յուրաքանչյուր պատգամավորի անձնական նախաձեռնողականությունը:

մարները ծախսվել են հիմնականում մարզային այցելություններ կատարելու և հանրային հանդիպումներ կազմակերպելու նպատակով:

Պատգամավորներ Սերգեյ Բագրատյանը և Թագուհի Թովմասյանը ներկայացրել են ամբողջական հաշվետվություն հարցման ժամանակահատվածի ընթացքում կատարած այցերի և քաղաքացիների ընդունելիության վերաբերյալ: Պատգամավորները նաև նշել են, որ հաճախ պատգամավորական գործունեությամբ պայմանավորված ծախսերը գերազանցել են 250.000 ՀՀ դրամը:

Պատգամավոր Խաչատուր Սուքիասյանն իր պատասխանում նշել է, որ պատգամավորական գործունեության համար նախատեսված 250.000 ՀՀ դրամը 2021 թվականի սեպտեմբեր ամսից սկսած փոխանցել է Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին: Բարեգործական նպատակների են ուղղվել նաև պատգամավոր Արթուր Վանեցյանին տրված փոխհատուցման վճարները: Պատգամավոր Էմմա Պալյանը ևս իր հարցման պատասխանում նշել է, որ աջակցություն է ցուցաբերել մի քանի անապահով ընտանիքի, իսկ գումարի հիմնական մասը ծախսվել է մարզային այցերի նպատակով:

Պատգամավորներ Ալեն Սիմոնյանը, Սեյրան Օհանյանը, Լիլիթ Գալստյանն իրենց պատասխաններում նշել են, որ գումարը ծախսվել է մարզային այցելություններ իրականացնելու նպատակով:

Պատգամավորներ Վլադիմիր Վարդանյանը, Արսեն Թորոսյանը, Ալխաս Ղազարյանն իրենց տառացիորեն կրկնվող պատասխաններում հղում են կատարել «Հանրային ծառայության մասին» օրենքին՝ նշելով, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում հայտարարագրեր, այդ թվում՝ եկամուտների և ծախսերի հայտարարագրեր, որոնք հրապարակվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պաշտոնական կայքէջում: Հարկ է նշել, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պաշտոնական կայքէջում զեկույցի մշակման ընթացքում վերոհիշյալ պատգամավորների 2021

թվականի տարեկան հայտարարագրերը դեռևս հրապարակված չէին:

Պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանն իր պատասխանում չի տրամադրել որևէ ինֆորմացիա՝ պատճառաբանելով, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատգամավորը հիշյալ օրենքի սուբյեկտ չի հանդիսանում:

Պատգամավորներն իրենց պատասխանների մեջ անդրադարձել են նաև այն փաստին, որ գործող օրենսդրությամբ խնդրո առարկա ծախսերի վերաբերյալ հաշվետվողականության իրավական պահանջ սահմանված չէ:

## 2. Հարցմանը պատասխանած պատգամավորներն ըստ խմբակցությունների:

«Հարթակ» ՀԿ-ն դիտարկել է նաև հարցմանը պատասխանած պատգամավորների թիվն ըստ խմբակցությունների, ինչն արտահայտված է ստորև:

**Հարցմանը պատասխանած պատգամավորներն ըստ խմբակցությունների**

Հարկ է նշել, որ «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը խնդրել է հարցման իր պատասխանն ընդունել որպես «Հայաստան» խմբակցության բոլոր պատգամավորների միասնական պատասխան: Հաջորդիվ ստացել ենք վերոհիշյալ խմբակցության ևս երկու պատգամավորի՝ Արթուր Ղազինյանի և Էլինար Վարդանյանի պատասխանները, ովքեր տեղեկացրել են,

որ հարցման պատասխանն ուղարկվել է խմբակցության ղեկավարի կողմից: «Հարթակ» ՀԿ-ն մոնիտորինգի արդյունքները վերլուծելիս չի դիտարկել Ս. Օհանյանի պատասխանը որպես խմբակցության բոլոր պատգամավորների պատասխան՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատգամավորական գործունեության դիմաց տրվող փոխհատուցումը տրվում է անձամբ պատգամավորին և վերջինս ինքնուրույն է տնօրինում փոխհատուցման գումարը՝ իր պատգամավորական գործունեությամբ պայմանավորված: Այդ իսկ պատճառով «Հարթակ» ՀԿ-ն հարցումներ է ուղարկել ոչ թե խմբակցություններին, այլ՝ բոլոր պատգամավորներին անհատապես: Այս մասին գրավոր տեղեկացվել են նաև «Հայաստան» խմբակցության պատգամավորները:

### 3. Հարցման պատասխանում փոխհատուցում ստանալու վերաբերյալ նշման առկայություն:

Հարցմանը պատասխանած պատագամավորների 50%-ը հստակ նշել է, որ ստացել է պատգամավորական ծախսերի դիմաց փոխհատուցում, մինչդեռ պատգամավորների 50%-ն այս կետի շուրջ հստակ չի արտահայտվել:

**Հարցման պատասխանում փոխհատուցում ստանալու վերաբերյալ նշման առկայություն ըստ հարցմանը պատասխանած պատգամավորների**

«Հարթակ» ՀԿ-ն հարցում է ուղարկել նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Ֆինանսական կառավարման և հաշվառման վարչություն: Ըստ ստացած պատասխանի, 2021

թվականի սեպտեմբերի 13-ից 2022 թվականի փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության 8-րդ գումարման Ազգային ժողովի բոլոր պատգամավորներն իրենց պատգամավորական գործունեությամբ պայմանավորված ծախսերի դիմաց ստացել են փոխհատուցում և դրանց վճարումը հավաստող փաստաթղթեր չեն ներկայացվել: Վարչության փոխանցմամբ, յուրաքանչյուր պատգամավոր՝ պատգամավորական գործունեության համար, ամսական ստանում է իր հասանելիք 250.000 ՀՀ դրամ գումարը: Պատգամավորական գործունեության համար նախատեսված բյուջեի ամսական գումարը կազմում է 26.750.000 ՀՀ դրամ: Մոնիտորինգի ենթակա ժամանակահատվածում պատգամավորական ծախսերի փոխհատուցումներն ըստ ամիսների ներկայացված են ստորև:

**Պատգամավորական ծախսերի փոխհատուցումներն ըստ ամիսների (սեպտեմբեր 13, 2021 - փետրվար 28, 2022):**




Ըստ վարչության, այն ամիսներին, երբ փոխհատուցման վճարի ամսական գումարը չի կազմել 26.750.000 ՀՀ դրամ, եղել են մանդատը վայր դրած և նոր մանդատ ստացած պատգամավորներ, որոնց նկատմամբ կիրառվել է համամասնություն:

# 4. ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

***Լևոն Բարսեղյան***

***Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ***

«Պատգամավորներին իրենց գործունեության համար արված ծախսերի փոխհատուցման 250.000-ական դրամների հատկացման գործընթացը մեծ կոռուպցիոն ռիսկ է պարունակում: Քանի դեռ պատգամավորները չեն որոշել այդ գումարների ծախսերի ֆինանսական և ծրագրային հաշվետվողականության համակարգ՝ պարտադիր իրար հետ փոխկապակցված զույգ հաշվետվություն, այդ գումարները կարող են ծախսվել ոչ նպատակային կերպով: Հիշեցնեմ, որ դա աշխատավարձ չէ, դա հոնորար չէ, դա որպես պատգամավոր կատարած ծախսերի փոխհատուցման համար նախատեսված գումար է: Եթե պատգամավորներն այդ գումարից ինչ-որ ծախս են անում, իմ կարծիքով, պիտի ծախսային ապացույց ներկայացնեն: Նաև պետք է նշեն, թե այդ գումարը ծախսելու համար ինչ գործողություններ են արել, որոնք պետք է լինեն հիմնավոր, տեսանելի և հասկանալի: Օրինակ՝ քաղաքացիների ընդունելություն Ալափարս գյուղում: Եթե պատգամավորը տրանսպորտային ծախս է անում, գնում է Ալափարս գյուղ կամ Ամասիայի որևէ բնակավայր՝ տրանսպորտային ծախսի վերաբերյալ պետք է ներկայացնի տաքսի ծառայության վճարման կամ բենզինի լիցքավորման կտրոն, եթե իր մեքենայով է գնացել: Սեղանին ինչ է դրել՝ ջրեր, թուղթ, գրիչ, գուցե հայտարարություն է տարածել քաղաքացիների ընդունելության մասին: Այս ամենը ծախսային փաստաթղթեր են, նաև պետք է ներկայացնի միջոցառման անցկացման ապացույցները: Գուցե անձը հարսանիք է գնացել և որոշել է դա ձևակերպել որպես պատգամավորի կատարած ծախս: Այսինքն՝ այդ ֆինանսական և ծրագրային հաշվետվությունը պետք է լինի եռամսյակային կամ ամսական, որպեսզի հարկատուներն իմանան, որ իրենց գումարներն օգտագործվել են նպատակային կերպով: Այս մասին խոսել եմ օրենքն ընդունելուց առաջ, օրենքն ընդունելուց անմիջապես հետո, պատգամավորներից մի քանիսին

եմ առերես ասել, բայց պատգամավորները և իշխող խմբակցությունը չեն ուզում ընդունել, որ այդ հաշվետվողականությունը կարևոր է: Այսինքն այս գումարներն ունենում են ստվերային ծախսումներ, որոնց մասին մենք տեղյակ չենք:

ԱԺ կանոնակարգ օրենքում հարկավոր է ունենալ ֆինանսական և ծրագրային հաշվետվության ընթացակարգ, որը չկա, և պատգամավորները չեն ուզում, որ լինի»:

*Լևոն Բարսեղյանի անդրադարձը պատգամավորների եկամուտների և ծախսերի հայտարարագրերին՝ պատգամավորական ծախսերի փոխհատուցման վճարների առնչությամբ.*

«Հայտարարագիրը գույքի և եկամուտի հայտարարագիր է, պատգամավորները լավագույն դեպքում ներկայացնում են, որ ամսական ստանում են 250.000-ական դրամ: Հայատարարագրի մեջ բենզինի 3.000 դրամի ծախսը հաստատ չեն նշում: Իրենք նենգափոխում են իրականությունը, եթե ասում են, որ հայտարարագրում հաշվետու են հանրությանը այս 250.000 դրամների մասով: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կայքում արդյո՞ք պատգամավորների հայտարարագրերի մեջ երևում են 250.000-ական դրամների ծախսերը: Որպես եկամուտ երևում է, որ անձն ունեցել է այսքան աշխատավարձ և 250.000 դրամ, բայց դրանք ինչպե՞ս են ծախսվել կամ արդյո՞ք այդ ծախսերը կապ ունեն պատգամավորական գործունեության հետ, վստահ եմ, որ որևէ մեկի հայտարարագրի մեջ դա չի երևում: Հայտարարագրերը դրա հետ կապ չունեն»:

*Լևոն Բարսեղյանի անդրադարձը ավագանիների անդամների ծախսերի փոխհատուցումներին.*

«Ավագանիների անդամները երկու օրենքներով, կախված համայնքից՝ Երևանում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և մնացած համայնքներում՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով նույնպես իրավունք ունեն փոխհատուցում ստանալ կատարած ծախսերի համար: Կրկնում եմ՝ խոսքը հոնորարի և աշխատավարձի մասին չէ: Երևանում օրենքով նախատեսված է մինչև նվազագույն աշխատավարձի չափով և ավագանու որոշմամբ ավագանու անդամները

կանոնավոր կերպով ստանում են այդ գումարները: Ավագանու որոշ անդամներ հրաժարվել են դրանից, ասելով՝ ծախսեր չեն կատարում, մյուսներն՝ առանց ծախսեր կատարելու կամ ծախսային հիմնավորումների ստանում են այդ գումարները: Մնացած համայնքների դեպքում օրենքը սահմանում է պատգամավորի համանման ծախսի 30%-ի չափով հատուցման գումար, իսկ դա ստացվում է 75.000 դրամ ամսական: Այսինքն՝ պատգամավոր փոխհատուցման վճարը 250.000 դրամ է, դրա 30%-ը ստացվում է 75.000 դրամ:

Ես առայժմ չգիտեմ դեպք, երբ Երևանից բացի որևէ այլ համայնքի ավագանու անդամ դիմել և ստացել է այդ գումարները, բայց եթե դիմեն և ստանան, շատ կարևոր է, որ դա իսկապես լինի հաշվետվողականության այն նույն համակարգով, որի մասին ես խոսում էի՝ ֆինանսական ծախսերի ապացույցներ և գործողությունների հաշվետվություն, որոնք կապակցված են ֆինանսական ծախսերի հետ: Կարող են լինել գործողություններ, որոնք ֆինանսական ծախսեր չեն առաջացրել, բայց չեն կարող լինել ֆինանսական ծախսեր, որոնք գործողություններ չեն առաջացնում:

Երևանում խախտվում է հաշվետվողականության իրավունքը համայնքապետի կամ ավագանու անդամների հատկացրած գումարների մասով. այնտեղ էլ ստանում են առանց հաշվետվություն տալու, նույնը տեղի է ունենում պատգամավորների հետ: Երկրում ունենք այսպիսի խայտառակ ծախսումների ծավալ»:

«Բարոյական չէ այսքան զոհերի, հանձնված Արցախի, տեղահանված արցախցիների խնդիրները լուծելու, զոհերի ծնողների փոխհատուցումներն արժանապատիվ մուծելու փոխարեն, ունենալով պատերազմի ծանրագույն բեռը մեր ուսերին, մտածել պատգամավորների լրավճարը բարձրացնելու մասին, և ես արձանագրել եմ՝ հիշե՛ք՝ գալու է այդ օրը, երբ հասարակությունը դիմելու է այն պատգամավորներին, որոնք իրենց ձեռքով ավելացրին իրենց հավելավճարը, դիմելու է այն ընդդիմադիր պատգամավորներին, որոնք թեթև աղմուկ բարձրացրին, բայց հիմա շարունակում են գերագույն հաճույքով ստանալ այդ հավելավճարը:

... Ոչ մի խորհրդարանում պատգամավորները երբեք էլ համաչափ չեն աշխատել: Յուրաքանչյուր խորհրդարանում լավագույն դեպքում արդյունավետ աշխատել է պատգամավորների տասը տոկոսը. մյուսների համար մանդատն ընդամենն իրենց ուսին խփած «պագոն» է եղել: Դա ոչ միայն այս կամ նախորդ, այլ նորանկախ Հայաստանի բոլոր խորհրդարանների վիճակագրությունն է: Տասը տոկոսն ակտիվ աշխատող պատգամավորներ են, մնացածի համար խորհրդարանը եղել է ճանապարհորդությունների տեղ: Նրանց կարծիքով՝ մանդատը տվել է կարգավիճակ, բայց կարգավիճակ մարդուն տալիս է սեփական գործունեությունը, սեփական հանրային կշիռը, ոչ թե թղթի կտորը:

Այս դեպքում մենք կարող ենք խոսել պետական միջոցների հերթական անարդյունավետ վատնման մասին, որովհետև առանց այդ էլ պատգամավորներն ստանում են բավականին բարձր աշխատավարձ: Եվ երբ նրանք իրենց շապիկները պատռում էին (այդ թվում՝ ընդդիմադիրները) և ասում. «մեզ լրավճար պետք չէ, մենք այստեղ մի խնդիր ունենք լուծելու», հիմա այդ լրավճարները ստանում են: Գալու է հերթական կամ արտահերթ ընտրությունների օրը, և հասարակությունն իր բոլոր հարցերն ուղղելու է և՛ իշխանականներին, և՛ ընդդիմադիրներին:

... Սահմանադրությամբ պատգամավորը կաշկանդված չէ հրամայական մանդատով, նրա աշխատանքն անչափելի է: Այս առումով հաշվետվողականության սանդղակ սահմանելը գրեթե անհնար է, բայց հասարակությունը տեսնում է՝ ով է աշխատում»:

***Արթուր Սաքունց***

***Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար, իրավապաշտպան***

«ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին ամսական 250 հազար դրամի հատկացման վերաբերյալ որոշումը՝ առանց դրա իրացման վերաբերյալ հաշվետվության պահանջի, հանդիսանում է ոչ հաշվետու և ոչ թափանցիկ կառավարման ցայտուն օրինակ: Պետական բյուջեից միջոցների ցանկացած հատկացում պետք է անցնի աուդիտ, ստուգում՝ այդ միջոցների ըստ հատկացման նպատակային օգտագործումը ստուգելու համար: Հակառակ դեպքում, դրանք հանդիսանում են միջոցների անվերահսկելի, ստուգման չենթարկվող ծախսեր, որը պարունակում է կոռուպցիոն ռիսկեր. ինչի՞ վրա են ծախսվում միջոցները, արդյո՞ք արդյունավետ են այդ ծախսերը, արդյո՞ք պետական բյուջեի միջոցները չեն օգտագործվում անձնական նպատակներով և այլն: Սրանք հարցեր են, որոնց պատասխանները պարտավոր են տրամադրել Ազգային ժողովի պատգամավորներն իրենց ընտրողներին:

Ինքնին արդեն, 250 հազար դրամական միջոցների տրամադրման վերաբերյալ «Հարթակ» հետազոտական կենտրոն հասարակական կազմակերպության հարցերին պատգամավորների պատասխանների պատկերը, երբ բոլոր պատգամավորները չեն պատասխանում, վկայում է ԱԺ պատգամավորների կողմից իրենց ընտրողների առջև հաշվետվությունից խուսափելու փաստի արձանագրում: Հենց նման հարցման պատասխանների անհամամետ փոքր թիվը վկայում է ոչ թափանցիկ գործելաոճի մասին, որը հիմնավորում է այդ միջոցների իրացման ընթացքում արդեն իսկ կոռուպցիոն ռիսկերի մասին: Ավելին, անգամ եթե օրենքով նման հաշվետվության պահանջ չի ներկայացվում, ապա պատգամավորներն իրենց հերթին ջանքեր չեն գործադրում

հաշվետու լինելու իրենց ընտրողների առջև՝ կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ օրինաչափ և հիմնավոր մտահոգությունները փարատելու համար: Նկատենք, որ ԱԺ պատգամավորներին տրամադրվող փոխհատուցման միջոցներն անհատական են, և պետք է անհատական հաշվետվություն ներկայացվի, ոչ թե ամբողջ խմբակցության կողմից տրվի պատասխան:

Սա բացարձակ անպատասխանատու և ընտրողների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի վկայություն է»:

# 5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պատգամավորների ծախսերի ավելացման 15.07.2021թ. օրենսդրական փոփոխության վերաբերյալ մոնիտորինգ»-ը հանգեցրել է հետևյալ եզրակացությունների.

1. Ազգային ժողովի բոլոր պատգամավորները մոնիտորինգային ժամանակահատվածում յուրաքանչյուր ամիս ստացել են սահմանված 250.000-ական ՀՀ դրամ պատգամավորական ծախսերի փոխհատուցման վճարը՝ անկախ տվյալ ամսում իրականացրած գործունեությունից, և առկա չէ որևէ հիմնավորում առ այն, որ պատգամավորը կատարել է այդ գումարին համարժեք ծախս:
2. Հիմք ընդունելով հարցումներից ստացած պատասխանները՝ որոշ պատգամավորներ իրենց ծախսերի փոխհատուցման համար նախատեսված վճարն օգտագործել են անձնական բարեգործական նպատակներով:
3. Համաձայն ԱԺ Ֆինանսական կառավարման և հաշվառման վարչության ներկայացրած տեղեկության՝ բոլոր պատգամավորների ծախսերի փոխհատուցումն իրականացվել է համահավասար, մինչդեռ բավարար հիմնավորում չկա այն մասին, որ բոլոր պատգամավորներն իրենց գործունեության իրականացման համար ծախսում են համաչափ դրամական միջոցներ: Պատգամավորներից մի քանիսի գրավոր հավաստմամբ՝ պատգամավորական գործունեության ընթացքում եղել են ամիսներ, երբ պատգամավորական ծախսերը գերազանցել են 250.000 ՀՀ դրամը: Մինչդեռ հարցական է մնում հարցմանը չպատասխանած պատգամավորների իրականացրած ծախսերի և յուրաքանչյուր ամիս ստացած փոխհատուցման համաչափությունը:
4. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքը չի սահմանում հաշվետվության պահանջ,

ինչն առաջ է բերում պետական միջոցների ոչ արդյունավետ կառավարում և կոռուպցիոն ռիսկեր:

5. Հարցումների ընթացքը ցույց է տվել, որ պատգամավորների մեծամասնությունը հակված չէ թափանցիկ և հաշվետու գործունեություն ծավալելուն, ինչի մասին վկայում է հարցմանը պատասխանած պատգամավորների ցածր ցուցանիշը:

## Հավելված 1

### *ՀՀ 8-րդ գումարման Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի պատասխանը «Հարթակ» հետազոտական կենտրոն ՀԿ-ի հարցմանը*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19 Հեռ./ֆաքս՝ + 374 10 527400

01.04.2022 թ.

«Հարթակ» հետազոտական կենտրոն
ՀԿ նախագահ Գոհար Հովհաննիսյանին

Հարգելի՛ Գոհար Հովհաննիսյան

Ի պատասխան Ձեր՝ 28.03.2022 թ. տեղեկատվություն ստանալու հարցման հայտնում ենք հետևյալը.

1. ՀՀ ԱԺ նախագահն օգտվել է պատգամավորական գործունեության ծախսերի դիմաց պատգամավորներին տրվող փոխհատուցումից:
2. Գործող օրենսդրության համաձայն՝ ծախսերի հաշվետվողականություն սահմանված չէ, հետևաբար որևէ ծախսային փաստաթուղթ չի ներկայացվել:
3. Ձեր նշած ժամանակահատվածում բազմաթիվ մարզային այցելություններ են եղել. մասնավորապես՝ Շիրակի, Տավուշի, Կոտայքի և Արարատի մարզեր: Միաժամանակ, հարկ եմ համարում տեղեկացնել, որ գործող օրենսդրությամբ ծախսերի հաշվետվողականություն սահմանված չէ:
4. Ծախսերի վերաբերյալ հաշվետվություն երբևէ չի ներկայացվել, քանի որ գործող օրենսդրությամբ ծախսերի հաշվետվողականություն սահմանված չէ:
5. Սույն կետի պատասխանը ներկայացված է վերը նշված պատասխաններում:

Հարգանքով՝

Տեղեկատվության ազատության պատասխանատու

Լաուրա Անտոնյան

# Հավելված 2

## *ՀՀ 8-րդ գումարման Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Արթուր Վանեցյանի պատասխանը «Հարթակ» հետազոտական կենտրոն ՀԿ-ի հարցմանը*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

«ՀԱՐԹԱԿ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

*Ձեր՝ 28.03.2022թ-ի թիվ 072/2022 թվակիր գրությանն ի պատասխան*

Հարգելի տիկին Հովհաննիսյան,

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի իմաստով տեղեկություն է համարվում անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ): Նշված տեղեկության տնօրինող կարող են լինել բացառապես տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններ և դրանց պաշտոնատար անձինք:

Վերոգրյալ կարգավորումից հետևում է, որ հարցմամբ պարտադիր տրամադրման ենթակա են տեղեկություն տնօրինողի մոտ առկա այն տեղեկությունները, որոնք ստացվել և ձևավորվել են օրենսդրությամբ սահմանված կարգով, մինչդեռ Ձեր գրությամբ պահանջված տվյալներն այդպիսին չեն և Օրենքի իմաստով չեն կարող համարվել «տեղեկություն», իսկ ՀՀ ԱԺ պատգամավորը՝ տեղեկություն տնօրինող:

Այնուամենայնիվ, ելնելով հասարակական հնարավոր հետաքրքրությունից և հրապարակային գործելու մեր համոզմունքից, հայտնում ենք.

ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Արթուր Վանեցյանը ՀՀ ԱԺ պատգամավոր ընտրվելուց և լիազորությունները ստանձնելուց հետո պատգամավորական գործունեության հետ կապված իր ծախսերի դիմաց երբևէ չի ստացել որևէ փոխհատուցում:

Ինչ վերաբերվում է պատգամավորի աշխատավարձից բացի պետական բյուջեից ՀՀ օրենսդրության համաձայն ստացվող հավելյալ վճարներին կամ օրենքով նախատեսված պատգամավորների փոխհատուցման վճարներին՝ դրանք, ինչպես նախկինում հայտարարվել էր, ուղղվում են բարեգործական նպատակներին:

ՀՀ ԱԺ պատգամավոր Արթուր Վանեցյանի օգնական Դ. Բաղդասարյան

## Հավելված 3

***ՀՀ 8-րդ գումարման Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի պատասխանը «Հարթակ» հետազոտական կենտրոն ՀԿ-ի հարցմանը***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Հարթակ» հետազոտական կենտրոն
հասարակական կազմակերպության նախագահ
Գոհար Հովհաննիսյանին

Հարգելի տիկին Հովհաննիսյան,

Ձեր՝ 28.03.2022թ.-ի 082/2022 հարցման կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

Պատգամավորի գործունեությունը հանրային գործունեություն է, Ձեր կողմից մատնանշված գումարի համար առանձին հաշվառում նախատեսված չէ, «Հայաստան» խմբակցության պատգամավորները պարբերաբար ունենում են այցեր և հանդիպումներ Երևանում, ՀՀ մարզերում, ինչպես նաև Արցախի Հանրապետությունում:

Խնդրում եմ, ի պատասխան Ձեր հարցմանը, վերը նշվածն ընդունել որպես «Հայաստան» խմբակցության բոլոր պատգամավորների միասնական պատասխան:

Հարգանքով՝

«Հայաստան» խմբակցության ղեկավար Ս.Օհանյան

28.03.2022թ.

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի աջակցության շնորհիվ: Սույն բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Հարթակ» հետազոտական կենտրոն հասարակական կազմակերպությանը, և հնարավոր է, որ չհամընկնեն Ա. Դ. Սախարովի անվան ՄԻՊ հայկական կենտրոնի տեսակետի հետ:

«Հարթակ» հետազոտական կենտրոն հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2021 թվականին Գյումրիում:

«Հարթակ» հետազոտական կենտրոնի առաքելությունն է հետազոտական և կրթական ծրագրերի միջոցով ձևավորել իրավագիտակից ու պահանջատեր հասարակություն, բարձրացնել հանրային մասնակցությունը համայնքային և պետական որոշումների կայացման գործընթացներում:

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ»
հրատարակչության տպարանում
100 օրինակ

Գրաֆիկ դիզայներ՝ Մարիամ Շախբազյան

096 987886

info.hartak@gmail.com